



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 5 ՂԵԿՏԵՄԲԵՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ ԶԹ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուած եւ Տէր,
Կեանք եւ արարիչ,
ողորմած, գթած, լոյս, երկայնամիտ,
անոխակալ, մարդասէր, ամենագութ,
պարգեւատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարեբանեալ:
Ամբողջեան դարան, վստահութեան պատսպարան,
անենգ բարի, անխաւար նառագայթ, մեղքի փառիչ,
վերքերու առողջացուցիչ,
անհասանելիներու միջոց,
իրբեւ Աստուծոյ Որդի՝ կը խոստովանիմք Քու անունդ,
Քեզի եւ Քու հօր եւ ահաւոր Հօրդ,
եւ ամենակալ եւ Քեզի հետ երկրպագուած Հոգիիդ
փառք եւ գոհաբանական պաշտամունք, յաւիտեանս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ բռն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ բն արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ ԳԻՐԸԸ ՀԱՄԵՄԱՏԵԼ ԵՓԵՍԱՑԻՍ 5:22-33

Հեղափոխականորեն երբ Երգ Երգոց գիրքը ուսումնասիրեցինք անոր մէջ տեսանք քանի մը առիթներով Քրիստոսի եւ Եկեղեցոյ կապը, որ ներկայացուց Փեսայի եւ Հարսի կերպարով, այլ խօսքով այր եւ կին: Խորքին մէջ Աստուծոյ եւ Իր ժողովուրդին կապը նոյնպէս այդ ձեւով կը ներկայացուի ամբողջ Աստուածաշունչ Մատեանին մէջ: Ուստի պարահական չէ, երբ Քրիստոս Աստուծոյ Արքայութեան աւերիսը կու տար եւ առակներով զայն կը ներկայացնէր, կը նմանցնէր հարսանիքի, հարսանեկան հրաւերի մը, որ մեծահարուստ մարդ մը իր մէկ հարիկ զակին համար հարսանիք մը պարտաւարեց: Ահա նոյն ձեւով ալ Պօղոս Առաքեալ Եփեսացիներուն ուղղուած իր նամակին մէջ երբ կը խօսի այր եւ կնոջ կապի ու յարաբերութեան մասին զայն կը ներկայացնէ որպէս այդպիսին, ոչ որպէս այր եւ կին սովորական իմաստով, այլ իւրաքանչիւրին մէջ տեսնելու դերը մէկուն մէջ Քրիստոս, իսկ միւսին՝ Եկեղեցին:

Յաճախ եղած են պահեր ուր գոյգեր դժգոհած չըսենք, բայց առարկած են ըսելով, թէ այն հարուածը որ կը կարդացուի պսակ ամուսնութեան ժամանակ, քիչ մը կարծէք խիստ է ոճը, կամ կը գործածուին այնպիսի բառեր, որոնք կարծէք շատ չեն յարմարիւր այսօրուան ընկերութեան դրուածքին կամ հասկացողութեան: Ահա այդ հարուածը կը փոխարինուի այս անգամ մէկ այլ ուրիշ Պօղոս Առաքեալէն քաղուած հարուածով մը, որ խորքին մէջ ան ալ իր ըսելիքը ունի, եւ կարեւոր հարուած է, չհաշուած Աստուածաշնչական բոլոր հարուածներն ալ կարեւոր են: Իսկ այդ հարուածը Կորնթացիներուն ուղղուած առաջին նամակէն է, որ կը խօսի սիրոյ մասին, որ ամբողջ հիմքն է ու հիմքը կը կազմէ քրիստոնէական վարդապետութեան, Քրիստոսի բերած Աւերարանին, եւ քրիստոնէական հաւաքին, որովհետեւ Առաքեալը կ'ըսէ. *«Մէր ունեցողը համբերաբար կ'ըլլայ եւ քաղցրաբար: Մէր ունեցողը չի նախանձիր, չի գռռոզանար, չի հպարտանար, անպարշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Մէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւաքայ, միշտ կը յուսայ եւ միշտ կը համբերէ»* (Ա Կորնթ 13:4-7): Իրօք կարեւոր ու փեղին հարուած է, որ կարելի է զայն փոխարինել միւս հարուածին հետ: Բայց հարցը կը կայանայ անով, որ գոնէ այս հարուածը օգտագործել քրիստոնէական ընթացիքի գոյարեւման ու պահպանման համար, բայց ըստ երեւոյթին, ցաւօք սրտի այս հարուածն ալ չ'օգնեց, որովհետեւ կը լսենք ընթանիքներ, որոնք հազիւ կը կազմուին, բայց արդէն ամուսնալուծման ընթացքին մէջ:

Բաւարար պիտի չըլլայ պարզապէս ըսել որ Աստուածաշունչը, եւ այս պարագային Երգ Երգոց գիրքը մեզ կը ներկայացնէ որպէս հարսը կամ կինը Փեսային, եթէ երբեք հնազանդութիւն պիտի չցուցաբերենք, ինչպէս կինը ամուսնոյն, այնպէս ինչպէս Եկեղեցին Քրիստոսի: Նոյնպէս ալ այրը իր կնոջ գլուխը ըլլալով, որպէս Քրիստոս Եկեղեցոյ, սիրելու իր կինը, որպէս իր մարմինը: Անոր դիմաց, սակայն, այր ըլլալով գլուխը իր կնոջ, նաեւ ի մտի ունենալ որ իր գլուխն ալ Քրիստոսն է: Անոր համար ալ եթէ կինը պարզականութիւնն ու պարտաւորութիւնը ունի հնազանդելու իր այր մարդուն, նոյնպէս ալ մարդը պարզականութիւնն ու պարտաւորութիւնը ունի հնազանդելու Քրիստոսի, որովհետեւ Երգ Երգոց գիրքին մէջ այդ էր պարկերը, որ հաւաքացեալները իրենք հարսն են Փեսային, ուստի պէտք է հնազանդին:

Ուրեմն, փարօրինակ չէ եւ ոչ ալ խիստ կամ ոչ հաճելի բառերու օգտագործում, այլ՝ Աստուծոյ խրատը իւրաքանչիւրիս, որպէսզի իւրաքանչիւրս որպէս հարսը ճշմարիտ Փեսային մեր հնազանդութիւնը ցուցաբերելու, որպէսզի անով պարտաւար ըլլանք դիմաւորելու Անոր գալուստը, որուն համար ալ անհամբեր սպասումով կ'ըսենք «շուրով երկուր իմ սիրականս», «Ահա շուրով կու գամ ես»: